Հաստատում եմ

Տնօրեն՝ Ժ□Ա□Բարսեղյան

<< 01 >> 09. 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝ ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1□Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը /. 2-րդ դասարանը բաղկացած է 31 աշակերտներից՝ 19 տղա,12 աղջիկ։Բոլոր աշակերտներն իրենց ընդունակություններով համապատասխանում են 2-րդ դասարանցու մակարդակին,սիրով են հաճախում դպրոց և ձգտում են լավ սովորել։Սակայն կան ցածր կարողությունների տեր աշակերտներ,որոնց հետ նախատեսվում է կատարել հատուկ ուսումնամանկավարժական աշխատանք,որպեսզի յուրացնեն համապատասխան ծրագիրը և ձեռք բերեն գիտելիքներ։

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում. Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է կատարել մի շարք ուսումնադաստիարակչական աշխատանքներ,աշակերտներին հաղորդել գիտելիքներ,ժամանակակից տեխնոլոգիաների և սարքավորումների մասին։Կազմակերպել միջոցառումներ,ամրապնդել կապը ծնողների հետ՝ նրանց անընդհատ տեղեկացնելով իրենց երեխաների ունեցած դժվարությունների մասին՝ յուրաքանչյուրին ցուցաբերելով անհատական մոտեցում։Բոլոր աշակերտներին ներգրավել միջոցառումներին,ուսումնական պարապմունքներին,որպեսզի բոլորը ձեռք բերեն համապատասխան գիտելիքներ,հմտություններ և կարողություններ։

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն. Կազմակերպել էքսկուրսիաներ մոտակա տարածքում գտնվող եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր: Ծանոթացնել դրանց պատմությանը, եկեղեցական տոներին, սովորեցնել հոգևորներգեր, շարականներ:

3.2. Գեղագիտական դաստիարակություն. Բնության մեջ, շրջապատում, արվեստում գեղեցիկը տեսնելու, գնահատելու կարողության ձևավորում: Արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակում, գեղեցիկը տեսնելու ունակությունների ձևավորում:

3.3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն. Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը մարդու կյանքում ամենալավ հատկանիշներից մեկն է: Մեծ դեր կարող են խաղալ մեր ժողովրդի պատմությունը, հայրենիքի մասին զրույցները և այլն: Հայրենասիրական զգացումների ձևավորման գործում մեծ դեր կարող են խաղալ նաև մեր պետության խորհրդանշանները:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն. Ֆիզիկական դաստիարակությունն ուղղված է անձի առողջության ամրապնդմանը, ֆիզիկական ճիշտ զարգացմանը, ուժի, ճարպկության, դիմացկունության, ֆիզիկական վարժությունների մասին գիտելիքների հաղորդմանը: Միայն դրանով կարելի է իրագործել <<Առողջ հոգի՝ առողջ մարմնում>> իմաստախոսության իմաստը:

3.5. **Աշխատանքային դաստիարակություն.** Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել մասնագիտական կողմնորոշման կարողություններ: Նրանց դարձնել հասարակական աշխատանքների մասնակիցը, այնպես անել, որ աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի:

3.6. **Բնապահպանական դաստիարակություն.** Աշակերտների մեջ դաստիարակել սեր դեպի բնությունը: Այնպես անել, որ յուրաքանչյուր աշակերտ շրջակա միջավայրի պահպանությունը դարձնի իր պարտականությունը, հոգատար վերաբերմունք ցուցաբերի բնական ռեսուրսների, հուշարձանների նկատմամբ:

3.7. Դպրոց-ընտանիք կապը. Երեխաների դաստիարակությունը իրականացնել դպրոցի, ընտանիքի և հասարակության համատեղ ջանքերով: Կազմակերպել ծնողական ժողովներ, կապ ստեղծել ընտանիքի հետ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամանակը	Կատարողներ
1-ին	Երեխաներին ծանոթացնել օրվա ռեժիմին, կարգ ու կանոնին: Ապահովել դասագրքերով և անհրաժեշտ գրենական պիտույքներով:	Սեպտեմբեր	Դասվար
2-րդ	Դասասենյակը կահավորել, ստեղծել կանաչ անկյուն: Սահմանել հերթապահություն, դասացուցակ:	Սեպտեմբեր	Դասվար
3-րդ	Զրույց նվիրված ՀՀ անկախության տարեդարձին:	Սեպտեմբեր	Դասվար
4-րդ	Անցկացնել զրույց աշակերտների վարքի կանոնների վերաբերյալ: Բացատրել նրանց իրավունքներն ու պարտականությունները:	Սեպտեմբեր	Դասվար
5-րդ	Կազմակերպել փոքրիկ միջոցառում նվիրված ուսուցչի տոնին: Կազմել պատի թերթ:	Հոկտեմբեր	Դասվար
6-րդ	Անցկացնել զրույց <<Համերաշխությունը կփրկի աշխարհը>> թեմայով:	Հոկտեմբեր	Դասվար
7-րդ	<<Կոնֆլիկտներ և դրանց լուծման եղանակները>> թեմայով զրույց:	Հոկտեմբեր	Դասվար
8-րդ	Անցկացնել զրույց դասագրքերի պահպանման	Հոկտեմբեր	Դասվար

	մասին: Ստուգել և գնահատել դասագրքերը:		
9-րդ	Զրույց ընկերասիրության մասին: <<Ո՞վ է իսկական ընկերը և ինչու՞>>: <<ՈՒ՞մ հետ եմ ավելի շատ ընկերություն անում՝ տղաների՞, թե՞ աղջիկների>>:	Նոյեմբեր	Դասվար
10-րդ	Կազմակերպել միջոցառում նվիրված աշնան տոնին: Կազմել պատի թերթ:	Նոյեմբեր	Դասվար
11-րդ	Անցկացնել խաղեր՝ ուշադրության զարգացման նպատակով:	Նոյեմբեր	Դասվար
12-րդ	Զրույց անվտանգ երթևեկության կանոնների մասին:	Նոյեմբեր	Դասվար
13-րդ	Զրույց հանդուրժողականության մասին: <<Ո՞վ է առաջինը ներում վեճերի ժամանակ>>:	Դեկտեմբեր	Դասվար
14-րդ	Ի՞նչ է մարդասիրությունը: Զրույց <<Երկրաշարժի զոհերի օր>> թեմայով:	Դեկտեմբեր	Դասվար
15-րդ	<<Իմ սիրած մասնագիտությունը>> թեմայով զրույց: Գրել փոքրիկ շարադրություն:	Դեկտեմբեր	Դասվար
16-րդ	Կազմակերպել Նոր տարվան նվիրված միջոցառում:	Դեկտեմբեր	Դասվար
17-րդ	Հեքիաթի քննարկում: <<Իմ հեքիաթի հերոսը>> պաստառի կազմում:	Հունվար	Դասվար
18-րդ	Հանդուրժողականություն: <<Հարևանները>>:	Հունվար	Դասվար
19-րդ	Անցկացնել զրույց նվիրված Հայոց բանակին:	Հունվար	Դասվար
20-րդ	Զրույց <<Կոնֆլիկտներ. Դրանց հաղթահարման եղանակները>> թեմայով:	Հունվար	Դասվար
21-րդ	Անցկացնել զրույց <<Առողջ ապրելակերպ>> թեմայով:	Փետրվար	Դասվար
22-րդ	Զրույց <<Մայրենի լեզու, բարբառ մայրենի>>	Փետրվար	Դասվար

	թեմայով: Մասնակցել գիրք նվիրելու միջոցառմանը:		ԾԽ
23-րդ	Կազմակերպել միջոցառում նվիրված Հովի. Թումանյանի 152-ամյակին: Կազմել պատի թերթ:	Փետրվար	Դասվար ԾԽ
24-րդ	Խաղ-մրցույթ շարքերի միջև:	Փետրվար	Դասվար
25-րդ	Կազմել պատի թերթ զարնանային թեմատիկայով: Գրել շարադրություն:	Մարտ	Դասվար
26-րդ	Կազմակերպել միջոցառում՝ նվիրված կանանց միամսյակին:	Մարտ	Դասվար
27-րդ	Կազմակերպել ծառատունկ դպրոցամերձ հողամասում:	Մարտ	Դասվար
28-րդ	Կազմակերպել բեմականացում տարվա եղանակները թեմատիկայով:	Ապրիլ	Դասվար
29-րդ	Քննարկում. «Որքանո՞վ եմ կատարում իմ պարտականությունները դպրոցում»:	Ապրիլ	Դասվար
30-րդ	Դասագրքերի ստուգում և գնահատում:	Ապրիլ	Դասվար
31-րդ	Ավանդական խաղերի կազմակերպում:	Ապրիլ	Դասվար
32-րդ	Հեքիաթի քննարկում. «Բարին հաղթում է չարին»:	Մայիս	Դասվար
33-րդ	Կամակերպել էքսկուրսիա:	Մայիս	Դասվար

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամանակը	Անցկացման վայրը
1.	Գիտելիքի օր:	Սեպտեմբեր	Դպրոց
2.	ՀՀ Անկախության օր:	Սեպտեմբեր	Դպրոց
3.	Ուսուցչի օր:	Հոկտեմբեր	Դպրոց
4.	Տարհանում:	Դեկտեմբեր	Դպրոց
5.	Նոր տարվա դիմակահանդես:	Դեկտեմբեր	Դպրոց
6.	Ամանորյա թատրոնի դիտում:	Դեկտեմբեր	Դպրոց
7.	Ջրօրհնեք:	Հունվար	Դպրոց
8.	Գիրք նվիրելու օր:	Փետրվար	Դպրոց
9.	Մայրենի լեզվի օր:	Փետրվար	Դպրոց
10.	Քաղաքացիական պաշտպանության օր:	Մարտ	Դպրոց
11.	Գարնան զարթոնքի և գեղեցկության տոն:	Ապրիլ	Դպրոց
12.	Սուրբ Զատկի տոն:	Ապրիլ	Դպրոց
13.	Մեծ Եղեռն:	Ապրիլ	Դպրոց
14.	Հաղթանակի օր:	Մայիս	Դպրոց
15.	Երեխաների պաշտպանության օր:	Մայիս	Դպրոց

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամանակը	Ծանոթություն
1.	Օրվա ռեժիմ: Կարգ ու կանոն:	Սեպտեմբեր	
2.	Ստեղծել կանաչ անկյուն, սահմանել դասասենյակի հերթապահություն:	Սեպտեմբեր	
3.	Զրույց նվիրված ՀՀ Անկախության տոնին:	Սեպտեմբեր	
4.	Իմ իրավունքներն ու պարտականությունները:	Հոկտեմբեր	
5.	Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ:	Հոկտեմբեր	
6.	Համերաշխությունը կփրկի աշխարհը:	Հոկտեմբեր	
7.	Կոնֆլիկտներ. դրանց լուծման եղանակները:	Նոյեմբեր	
8.	Զրույց ընկերասիրության մասին:	Նոյեմբեր	
9.	Դեղնահեր աշուն:	Նոյեմբեր	
10.	Անվտանգ երթևեկության կանոնները:	Դեկտեմբեր	
11.	Սպիտակի երկրաշարժ:	Դեկտեմբեր	
12.	Իմ սիրած մասնագիտությունը:	Հունվար	
13.	Հայոց բանակ:	Հունվար	
14.	Առողջ ապրելակերպ:	Փետրվար	
15.	Մայրենի լեզու, մայրենի բարբառ:	Փետրվար	
16.	Գարունն իմ այգում:	Մարտ	
17.	Մայր իմ անուշ ու անգին:	Մարտ	
18.	Ծառատունկ:	Ապրիլ	
19.	Տարվա եղանակները:	Մայիս	

ԴԱՍՂԵԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Դասղեկի բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության և աննրբանկատության:
2. Դասղեկը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:
3. Եթե դասղեկը ուզում է, որ իրեն հարգեն, առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:
4. Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դասղեկն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների նկատմամբ, հասկանա նրանց շահերը, կարիքներն ու պահանջները:

Դասղեկը պետք է ունենա՝

1. Ներքին ազատություն,
2. մտածելակերպի, վարքի ազատություն,
3. սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում:

Դասղեկը պետք է կարողանա՝

1. Պլանավորել իր մասնագիտական գործունեությունը:
2. Վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները:
3. Աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ որպես անհատ ձևավորմանը:

4. Աշակերտներին սովորեցնել վերլուծել իրենց արտաուսումնական գործունեությունը:
5. Կապեր հաստատել աշակերտների ծնողների, առարկայական ուսուցիչների և հասարակության հետ:

Ի՞նչն է ամենակարևորը դասղեկի համար՝ երեխաների հետ շփման ժամանակ:

- Բարությունը,
- ուշադրությունը,
- հոգատարությունը,
- աշակերտին հասկանալը,
- կարեկից, արձագանքող վերաբերմունքը,
- շփման համար բաց լինելը,
- բարեհամբույր լինելը,
- պատասխանատվության բարձր զգացումը,
- մարդասիրությունը,
- անկեղծությունը,
- հումորի զգացումը,
- լրջությունը,
- հավասարակշռվածությունը,
- արդարամտությունը,
- նպատակասլացությունը,

- ժամանակակից լինելը:

Ի՞նչն է ամենակարևորը դասղեկի համար՝ ծնողների հետ շփման ժամանակ:

- ազնվությունն ու արդարամտությունը,
- համբերատար լինելը,
- հանգստությունը,
- բարեկրթությունը,
- նրբանկատությունը:

Դասղեկ լինել՝ նշանակում է,

- մեծ պատասխանատվություն կրել,
- կարողանալ լսել և հասկանալ,
- հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի մասին՝ նրա հոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին,
- ղեկավարել և կարգ ու կանոն պահպանել,
- փոխարինել ծնողներին, ավագ ընկերոջը,
- արդարամիտ լինել:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԴԱՍՂԵԿԻՆ

- Հիշե՛ք, որ յուրաքանչյուր երեխա իր հետաքրքրությունները, ուրախություններն ու տխրությունները, իր ներաշխարհն ունի, կպչուն մի՛ եղեք:
- Քանի դեռ ճշմարտությունը չեք պարզել, հանգստություն պահպանե՛ք:
- Մտե՛ք երեխայի դրության մեջ, փորձե՛ք հասկանալ, թե ինչ է նա զգում, հետո նոր որոշում կայացրեք:
- Լավ ու բարի արարքներ գործե՛ք, նրանք մեզանից են սովորում:
- Այնպես արե՛ք, որ երեխայի համար հաճելի լինի ձեզ հետ շփվելը, գովեք, ընդգծեք հաջողություններն ու ոգեշնչեք նրան:
- Ավելի շատ ինքնուրույնություն և ընտրելու իրավունք տվե՛ք:
- Խուսափո՛ք մեղադրելուց:
- Մի՛ մեծամտացեք: Ընդունեք, որ դուք էլ ինչ-որ բան չգիտեք:
- Մի՛ սահմանափակեք ձեր երևակայությունը, մի՛ վախեցեք անսովոր երևալուց:
  Մի՛ համեմատվեք այլ ուսուցիչների հետ: Փոխարենը համեմատեք ինքներդ ձեզ՝ երեկ և այսօր: